*շինուած լինի ՈԿԲ (= 1213) թուին, գրան գլխի արձանագրութեան համեմատ, իսկ 1221 թուին Աղբայրիկ վարդապետը, որ ճարտարապետն է, յայտնում է, թէ «շինեցի զեկեղեցիս եւ զգաւիթս». վերջապէս Վաչէ իշխանի ամուսինը, վանքի շինել տուողը, Մամախաթունի ՈԶԱ (= 1232) թուին արձանագրում է, թէ «շինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս». նոյն ժամատան արեւելեան պատին ևս կայ Խնծորիկի արձանագրութիւնը ՈԿԲ (= 1213) թուից (*): Այս բոլորը ցոյց են տալիս, թէ տաճարն ու ժամատունը շինուած են անմիջապէս իրար յետոյ: Սաղմոսավանքի տաճարն ու գաւիթը շինուած են միաժամանակ նոյն Վաչէ իշխանի և նորա ամուսին Մամախաթունի հովանաւորութեամբ 1215 թուին. գաւթի երդիկը զարդարող սիրուն խաչքանդակը նուիրուած է Վաչէին. «սբ. Նշան տէրունական Վաչէի լեր քաւարան»: Գանձասարի վանքը աւարտած է 1239ին և օծուած 1240 թուին Հասան-Ջալալի ձեռքով, իսկ գաւիթը նորա կնոջ Մամքանի և անդրանիկ որդու՝ Աթաբէգի կողմից 1266 թուին. «յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս» (*):*



*Պատկեր 146.*

(*) Գրի առնուած և լուսանկարուած մեր ձեռքով Վաչուտեաններին նուիրուած հատորի համար:

(*) Գանձ. 256: Բարխուդարեան, Արցախ, 173-175: